ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/26» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

15-ը հունիսի 2018թ.
ժամը 11^{30}

Քանի որ հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյանը բացակայում էր, հանձնաժողովի նիստը նախագահեց՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյանը,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա ավագ լեյտենանտ Ս. Նիկոլյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության նորմատիվ իրավական ապահովման բաժնի առաջատար մասնագետ, քիծ 3-րդ դասի խորհրդական Ն. Արշակյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/26» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. **«Դելտա» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված շտկման քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված շտկման քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին

1.1 «Դելտա» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում շտկեց առկա անհամապատասխանությունը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ **«Դելտա», «Վիոլա» ՍՊԸ-ների և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի** կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ Հավելված N6-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում), Հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) և տեխնիկական բնութագրերը գնահատել գնանշման հարցման հրավերի պահանջներին համապատասխան:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/26» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին առաջին տեղ զբաղեցնող մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/26» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/26» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Հ. Ավետիսյան
Գնահատող		Ն. Հարությունյան
Գնահատող		Ս. Նիկոլյան
Գնահատող		Ն. Արշակյան
Գնումները համակարգող՝		Ա. Մաղաքյան